

## ԿԱՐԾԻՔ

### Արփինե Արմենի Սիմոնյանի

**«Վանանդեցիների Ամստերդամի տպարանի հրատարակությունների գեղարվեստական հարդարանքը» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Հայոց հնագույն հրատարակությունների գեղարվեստական ձևավորման հարցերը մինչև վերջին շրջանը գրեթե չեն դարձել արվեստագիտական հատուկ ուշադրության առարկա: Մինչդեռ դրանց համակողմանի քննությունը կարող է նկատելի բացեր լրացնել թե՛ ազգային կերպարվեստի և գրատպության, թե՛ եվրոպական և հայ մշակույթի միջև եղած կապերի պատմության բնագավառներում: Տվյալ ուղղությամբ առաջ շարժվելու ողջունելի մի փորձ է Արփինե Սիմոնյանի ատենախոսությունը, որը նվիրված է Վանանդեցիների հայազգի հրատարակչական գերդաստանի լույս ընծայած գրքերի գեղարվեստական հարդարանքին:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ XVII դարի վերջից Ամստերդամում գործունեություն ծավալած Վանանդեցիների հրատարակությունների պլաստիկական համակարգն առաջին անգամ է դառնում արվեստագիտական հատուկ, ընդգրկուն ուսումնասիրության առարկա: Համատեղելով հետազոտության աղբյուրագիտական, ձեռագրագիտական, պատկերագրական, ոճաբանական և այլ մեթոդները՝ ատենախոսն ընթերցողի դատին է հանձնել համակողմանի մի աշխատանք, որի արդյունքները կարող են կիրառություն գտնել հայագիտության զանազան ոլորտներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ենթագլուխների տրոհվող երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ներկայացված են նրա աղբյուրները և օգտագործված գրականությունը, հետազոտության մեթոդները, դրա տեսական և

գործնական նշանակությունը, գիտական նորույթը, փորձաքննությունը, կառուցվածքն ու համառոտ բովանդակությունը:

Աշխատության առաջին գլխում դիտարկվում է հայոց տպագրության սկզբնավորումը, Ամստերդամի հայկական տպարանի պատմությունը, եպիսկոպոս Թովմաս Վանանդեցի Նուրիջանյանի և նրա գերդաստանի մյուս, կրտսեր ներկայացուցիչների հրատարակչական գործունեությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում քննարկվում են Վանանդեցիների հրատարակած գրքերի պատկերազարդման համակարգի կառուցվածքը, դրանց փորագրանկարների նախօրինակները:

Հետազոտության երրորդ, ամենածավալուն գլուխը նվիրված է Վանանդեցիների հրատարակությունների թեմատիկ պատկերների վերլուծությանը, որոնք հեղինակել է ծագումով գերմանացի, սակայն մասնագիտական գործունեությամբ հիմնականում Հոլանդիայի հետ կապված փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմ Կրտսերը (1581–1658): Գլուխը ներառում է նրա հինկտակարանային և ավետարանական թեմաներով փորագրանկաների, նաև՝ Ս. Հովհաննես Առաքյալի և Աստվածաբան Ավետարանչի Հայտնության գրքի պատկերազարդումների մանրակրկիտ քննությունը: Առանձին ենթագլխում տրված է այդ թեմատիկ ստեղծագործությունների ոճական և կերպարային բնութագիրը:

Եզրակացությունն ամփոփում է ատենախոսության հիմնական արդյունքները:

Աշխատության հավելվածը ներկայացնում է 146 սև-սպիտակ և գունավոր վերատպություն պարունակող ալբոմ՝ բնօրինակների վերաբերյալ անհրաժեշտ ստեղծկատվությամբ (հեղինակ, վերնագիր, ստեղծման տարեթիվ և այլն):

Ուսումնասիրության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի ութ տպագիր հոդվածներում և մեկ գրքում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Բնութագրելով Ա. Սիմոնյանի աշխատությունը՝ կարող ենք արձանագրել, որ սա բարեխիղճ, գիտական պատշաճ մակարդակով կատարած ուսումնասիրություն է, որն զգալի նորույթ է բերում հայ կերպարվեստի պատմության մեջ: Ակներև են ատենախոսության ուժեղ կողմերը՝ հստակ սահմանված հիմնախնդիր, գրական աղբյուրների և հարցադրումների բավական լայն ընդգրկում, տրամաբանական

հստակ կառուցվածք, գիտական ապարատի ճշտություն: Շարադրանքը հիմնականում ստույգ և սահուն է: Առանձնակի խնամքով է կազմած աշխատության պատկերագիրքը, ուր գետեղված են տեքստում հիշատակվող գրեթե բոլոր գործերի վերատպությունները՝ ի գոհունակություն ընթերցողի: Կարծում ենք՝ հեղինակին լիովին հաջողվել է լուծել իր առջև դրած գիտական խնդիրը՝ ամբողջական և համոզիչ ներկայացնել Վանանդեցիների հրատարակած գրքերի գեղարվեստական հարդարանքը, բացահայտել դրա ակունքներն ու զուգահեռները, մատնանշել պատկերագրական և ոճական ուրույն դիմագիծը: Ատենախոսության արժանիքներից են նաև մեծաթիվ համեմատությունները, որոնց շրջանակն ընդգրկում է ինչպես գրքարվեստն ու փորագրանկարչությունը, այնպես էլ հաստոցային ու մոնումենտալ արվեստը: Դրանով հայ գրատպության հուշարձանները ներգծվում են ոչ միայն ազգային, այլև եվրոպական մշակույթի համատեքստ: Աշխատանքի կայացման, նաև՝ դիսերտանտի տեսական և մեթոդաբանական կողմնորոշման գործում, անշուշտ, մեծ է ատենախոսության գիտական ղեկավար՝ ԵՊՀ դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Մանուկյանի դերակատարությունը: Ցանկալի է, որ հետագայում, մասնագիտական և տեխնիկական որոշակի խմբագրումից հետո, ատենախոսությունը հրատարակվի պատկերազարդ մենագրության տեսքով:

Բարձր գնահատելով Ա. Սիմոնյանի աշխատանքը՝ այդուհանդերձ ունենք մի քանի դիտողություն:

1. Շարադրանքում կան տրամաբանական, լեզվաոճական, ուղղագրական անճշտություններ, հակասություններ, որոնք հակված ենք վերագրել ոչ թե հեղինակի թերիմացությանը, այլ ուշադրության պակասին: Պահպանված չէ օտարալեզու անձնանունների, տեղանունների, անվանումների և վերնագրերի թարգմանության և գրության միասնականություն սկզբունքը (էջ 29, 34, 57, 59՝ և այլն): Այս ամենը կարելի էր հեշտությամբ շտկել աշխատանքի վերընթերցման, առանձին հատվածների կրկնակի, ավելի բժախդիր խմբագրման պարագայում: Նմանօրինակ թերությունները չենք թվարկում՝ սույն կարծիքը չձանրաբեռնելու նպատակով, սակայն հարկ եղած դեպքում կարող ենք տրամադրել դրանց ամբողջական ցուցակը:

2. Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 54) նշված է, որ անգլիացի փորագրիչ Թոմաս Բյուիկը (1753–1828) «որդեգրեց» XVIII դարի հայ տպագրիչ Գրիգոր

Մարզվանեցու գյուտը, այն է՝ փայտագրության համար լայնակի կտրվածքով տախտակներ կիրառելու տեխնիկան, որը, ըստ ատենախոսի, եվրոպական արվեստ թափանցեց Մարզվանեցու հայտնագործությունից միայն 60 տարի անց: Այն, որ Մարզվանեցին գործածել է լայնակի փայտագրության տեխնիկան 1706 թվականի Յայսմավուրքում, հաստատված է հղումով (**Հ. Տիգրանյան**, Գրիգոր Մարզվանեցու հրատարակությունները և նրանց արվեստը // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական չորրորդ նստաշրջան. Նվիրված է Կոմիտասի ծննդյան 140-ամյա հոբելյանին, Նստաշրջանի նյութեր, 22 դեկտեմբեր, 2009, Երևան, 2010, էջ 136-141, նաև՝ **Մ. Ղազարյան**, Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Երևան, 1989, էջ 61): Սակայն տեխնիկան Բյուիկի կողմից «որդեգրելու» հանգամանքը մնում է անապացույց. չկա համապատասխան հղում, չի մատնանշվում եվրոպական արվեստի այն օրինակը կամ օրինակները, որտեղ առաջին անգամ գործածվել է լայնակի փայտագրությունը:

3. Անդրադառնալով 1702 թվականի Շարակնոցում զետեղված «Ադամի և Եվայի անհնազանդությունը» պատկերին՝ ատենախոսը գրում է, որ այն «...համարվում է Քրիստոֆել վան Զիխեմի նորամուծությունը, որտեղ նա ցուցաբերել է ստեղծագործական ինքնատիպ մոտեցում՝ ոճական ուրույն առանձնահատկությամբ» (էջ 74): Լավ կլիներ պարզաբանել՝ ո՞վ է այդպես համարում, ո՞րն է նշված նորամուծությունը և ինչո՞ւմ է դրսևորվել վան Զիխեմի ստեղծագործական ուրույն մոտեցումը: Հակառակ դեպքում պնդումը համոզիչ չէ:

4. «Զիխեմը, – կարդում ենք աշխատության երրորդ գլխում, – կրկնօրինակել է ԺԵ-ԺԷ դարերի եվրոպական ամենահայտնի նկարիչների և փորագրիչների աշխատանքները: Այդ վարպետների ստեղծագործություններում առկա ոճական գծերը, արտահայտչականությունը բնորոշ են բարոկկո ոճին: Ուստի մենք տալիս ենք այդ ոճով ստեղծված բոլոր փորագրապատկերների ընդհանրական բնութագիրը, որոնք օգտագործվել են Վանանդեցիների հրատարակություններում» (էջ 130): Ինչպես հայտնի է, բարոկկո ոճը եվրոպական արվեստում սկիզբ է առել 1580-ական թվականներին՝ ծաղկում ապրելով հաջորդ հարյուրամյակում: Հետևաբար, XV դարում և XVI դարի առաջին երեք քառորդներում գործած եվրոպացի վարպետների աշխատանքները չի կարելի բնութագրել իբրև բարոկկո: Թեև վան Զիխեմը այդ ոճի

ժամանակակիցն էր, նրա օգտագործած նախօրինակների մեծ, եթե չասենք՝ գերակշիռ մասը որևէ կապ չունի բարոկկոյի հետ: Մեր այս առարկությունը սկզբունքային է, որովհետև հետազոտողի նույն դիրքորոշումն արտացոլված է նաև եզրակացության մեջ (էջ 135):

Բայց և այնպես վերոնշյալ նկատառումները բնավ չեն խաթարում ատենախոսության ընդհանուր բարձր գնահատականը: Իր չափանիշներով Արփինե Սիմոնյանի աշխատությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 Մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,  
արվեստագիտության թեկնածու՝**

 **Արթուր ԱՎԱԳՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյանի ստորագրությունը վավերացնում են՝

**Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝**

**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝**

**Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

3 սեպտեմբերի 2020 թ.

